ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-416-09.12.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդված 2-րդ պարբերությունից հանել «(գործածության նշաններ ունեցող)» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածն ամբողջությամբ հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներ	Փոխել նախագծի հոդվածների համարակալումները, համապատասխանաբար՝ հոդված 5-ը՝ 4, 6-ը՝ 5, 7-ը՝ 6:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող 249.1. հոդվածի 1-ին մասում «միության անձանց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող 249.1. հոդվածի 2րդ-ից 10-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «2. Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող օտարերկյրյա ֆիզիկական անձ է ճանաչվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ ունեցող այն ֆիզիկական անձը, որին, բնակչության պետական ռեգիստրը վարող ՀՀ կառավարության լիազոր մարմինը տրամադրել է Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթ: 3. Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը տրամադրվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված այն ֆիզիկական անձին, որը այդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		փաստաթուղթը ստանալու նպատակով, նույն մասում հիշատակված լիազոր մարմնին դիմելու օրվան նախորդող 1825 օր ժամանակահատվածում առնվազն 915 օր մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: 4. ՀՀ մշտական բնակության տեղափոխվող ճանաչված կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձիք կարող են արտոնությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծել իրենց անձնական օգտագործման ապրանքները, եթե Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններ են ներկայացնում համապատասխան կարգավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը և նախորդ բնակության երկրում բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը, հետևյալ պայմանների միաժամանակյա ապահովման դեպքում. ա) նախորդ բնակության երկրից Միության մաքսային տարածք ներմուծումն իրականացվում է ոչ ուշ, քան օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու փաստը հաստատող փաստաթղթի		

		կամ այդ անձի կողմից Հայաստանի Հանրապոտության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու փաստը հաստատող փաստաթղթի տրման օրվանից 18 ամսվա ընթացքում. բ)անձնական օգտագործման ապրանքները ձեռք են բերվել օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու փաստը հաստատող փաստաթղթի կամ այդ անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու փաստը հաստատող փաստաթղթի տրման օրվանից առաջ. գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ այդ ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու կամ նրա կողմից փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու հետ կապված՝ Միության մաքսային տարածք մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ անձնական օգտագործման ապրանքների ներմուծում այդ ֆիզիկական անձի կողմից նախկինում չի		

		իրականացվել. 5. Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա ֆիզիկական անձի մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակվելու հանգամանքի և ժամանակահատվածի որոշումը իրականացնում է բնակչության պետական ռեգիստրը վարող ՀՀ կառավարության լիազոր մարմինը՝ տվյալ ֆիզիկական անձի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու տեղեկատվության հիման վրա: 6. Սույն հոդվածին համապատասխան որպես Հայաստանի Հանրապետության տարածք մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց նկատմամբ արտոնության կիրառման, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակված լինելու հանգամանքը և ժամանակահատվածը ստուգելու, անձին մշտական բնակության		

		փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթ տրամադրելու կարգերը, և սույն հոդվածում հիշատակված լիազոր մարմինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		
Հ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Փոխել մասերի համարակալումները համապատասխանաբար՝ 11-ը՝ 7-ի, 12-ը՝ 8-ի, 13-ը՝ 9-ի, 14-ը՝ 10-ի, 12-ը՝ 15-ի, 13-ը՝ 16-ի:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 249.1. հոդվածի 11-րդ մասում՝ ա) «բնակության վայր ունեցող» բառերից հետո լրացնել «և ժամանակավորապես օտաերկրյա պետությունում բնակվող» բառերով, բ) «կամ» բառը փոխարինել «և (կամ)» բառերով;	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 249.1. հոդվածում «11-րդ մասի» բառերը փոխարինել «7-րդ մասի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 249.1. հոդվածի 13-րդ մասում «Արտոնության տրամադրման» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 7-րդ մասում նախատեսված արտոնության տրամադրման» բառերով;	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 249.1. հոդվածի 14-րդ մասում «11-րդ մասով» բառերը փոխարինել «7-րդ մասով» բառերով;	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված 249.1. հոդվածի 14-րդ մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «11. Սույն հոդվածի 4-րդ և 7-րդ մասերում նշված անձիք միաժամանակ չեն կարող օգտվել սույն հոդվածում նշված մեկից ավելի արտոնությունից:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրը, 1-ին, 2-րդ մասերը և 3-րդ մասի համարակալումը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է: